Л.У. АЙРАПЕТЯН

ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ И СТЕРЕОТИПНЫЕ КОНСТРУКЦИИ КАК КОМПОНЕНТЫ ИЗЪЯСНИТЕЛЬНОГО ПРИДАТОЧНОГО ПРЕДЛОЖЕНИЯ

В лингвистике отдельный интерес представляют фразеологизмы и речевые стереотипы как языковой строительный материал для синтаксических конструкций. Эти устойчивые языковые единицы имеют своеобразное проявление особенно в изъяснительных придаточных предложениях, где они могут иметь статус главного или зависимого компонента или выступать как значимая часть формирования этих компонентов.

Ключевые слова: фразеологизм, речевой стереотип, сложноподчиненное предложение, изъяснительное подчинение, предикация, бессоюзные конструкции, модальность.

L.U. HAYRAPETYAN

PHRASEOLOGICAL AND STEREOTYPE STRUCTURES AS PARTS OF OBJECT CLAUSES

In linguistics, phraseological units and speech stereotypes, which serve as units for forming syntactic constructions, are of particular interest. These set expressions or metasemiotic linguistic units have a unique actualization, especially in object clauses, where they can be the main or subordinate component or can act as the main part in the formation of these components.

Keywords: phraseological unit, speech stereotype, complex sentence, object clause, predication, asyndetic constructions, modality

ՀՏԴ 808.1:821.19

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՉԱՐԴԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ներկայացվում են Ռ. Չարդարյանի գրական գործունեությունը և նրա ունեցած դերը արևմտահայ գրական կյանքում:

Առանցքային բառեր. գրող, հասարակական գործունեություն, մշակութային կենտրոն, պարբերական հանդես:

Ռուբեն Չարդարյանը գրականություն է մուտք գործում 1893թ., երբ Կ. Պոլսի «Մասիս» հանդեսում տպագրվում են նրա առաջին ստեղծագործությունները՝ «Երգչուհին», «Վրաններ Մաստառի շրջանը» արձակ էջերը: Նույն 1893թ.

հրապարակավ հնչում է առաջին արձագանքը: Ա. Չոպանյանը, Կ. Պոլսի «Հայրենիք» թերթում խոսելով Ռ. Որբերյանի «Հիշատակաց ծաղիկներ» բանաստեղծական ժողովածուի մասին, հպանցիկ անդրադառնում է նաև Զարդարյանին:

Գրողի անունը մտավորական շրջանակներում ավելի հայտնի է դառնում, երբ 1895թ. Ա. Չոպանյանի «Ծաղիկ» լրագրում լույս են տեսնում նրա «Քարացածները», «Ծովակին հարսը» հեքիաթները: Այդ հաջող և խոստումնալից սկիզբը, դժբախտաբար, համընկնում է 1894-1896թթ. համիդյան ջարդերին, որոնք մի որոշ ժամանակով խափանում են հայ գրողների և, ընդհանրապես, մտավորականների գործունեությունը: Փակվում են թերթեր ու հանդեսներ, որոշ գրողներ ու հասարակական գործիչներ լքում են հայ մշակութային կենտրոն Կ. Պոլիսը: Սարսափի ու մղձավանջի օրերը որոշ չափով թոթափվում են 1898թ.-ին, երբ վերաբացվում են արգելված պարբերականները: Հենց այդ թվականից սկսած՝ Զարդարյանն աշխատակցում է «Մասիս», «Ծաղիկ», «Արևելք», «Արևելյան մամուլ» և «Շիրակ» լրագրերին՝ հրապարակելով ժամանակի հասարակական-գրական կյանքը լուսաբանող հոդվածներ և ինքնատիպ երկեր: Հետզհետե հոգևոր արթնության առկայծումներ են նշմարվում տիրող խավարի ու երկյուղի մթնոլորտում: 1900-ականների սկզբին նոր շնչառություն ստացած գրական շարժումը բորբոքվում է «Վաղվան գրականությունը» բանավիճային շիկացումներով: Զարդարյանը Խարբերդից ուղարկած իր թղթակցություններով քննարկման կիզակետում էր:

1898թ. նա համալրում է ՀՅԴ շարքերը, Ասլան ծածկանունով թղթակցում «Դրոշակ» թերթին:

Համբավ ձեռք բերած գրական ու հասարակական գործիչը չէր կարող վրիպել թուրքական իշխանության տեսադաշտից: Եվ սկսվում են հետապնդումները. 1903-ին բանտարկվում է, ապա ազատ արձակվում: Շուտով տեղի են ունենում դեպքեր, որոնք նոր արգելքներ են ստեղծում Զարդարյանի ճանապարհին:

1904 թվականին Ռուբեն Զարդարյանը, խուսափելով թուրքական կառավարության հետապնդումներից, տեղափոխվում է Իզմիր և մոտ մեկ տարի աշխատում Մանիսայի ազգային վարժարանում: «Խարբերդէ ելլելէ վերջ,-վկայում է որդին՝ Հր. Զարդարյանը, - տարի մը մօտաւորապէս, մնացինք Իզմիր, ուր Ռուբէն Զարդարեան տեղւոյն ազգային վարժարանի տեսչութիւնը ստանձնեց: ...Մօտաւորապէս տարի մը վերջ, նախազգալով մօտալուտ փոթորիկի մը պայթիւնը, փոխադրուեցանք Ֆիլիպէ» [1]:

Ինչպես նշում է Հր. Զարդարյանն ինքնակենսագրանում, 1905-ին Ռուբենն ստիպված է լինում ընտանիքով հեռանալ քաղաքից և հաստատվել Բուլղարիայի

նախ Սոֆիա, ապա Ֆիլիպե քաղաքում, ուր սկսում է հրատարակել «Ռազմիկ» շաբաթաթերթը՝ իր շուրջը համախմբելով ժամանակի ազատատենչ մարդկանց:

Նա «Ռազմիկ» թերթով ծավալում է հրապարակախոսական բուռն գործունեություն, կազմակերպում է գրական-հասարակական բանավեճեր, երբեմն էլ տպագրում երկեր՝ էժտահար կեղծանունով: Նա թղթակցության է հրավիրում հայ մտավորականությանը, այդ թվում՝ Սիամանթոյին, Ռ. Որբերյանին և Դ. Վարուժանին:

«Այսօրուան պէս աչքիս առջեւն է անսահման զմայլանքէ մը լուսաւորուած հօրս դէմքը,-գրում է որդին,- երբ Ֆիլիպէ, շրջապատուած «Ռազմիկ»ի խոնարհ աշխատակիցներէ, ան կը կարդար բանաստեղծին (Սիամանթոյին – Հ.Կ.) ղրկած մէկ քերթուածը: Խումբին մէկ արանքը սպրդած, կը յիշեմ մանաւանդ ունկնդրութիւնը քերթուածի մը, որմէ բառ հասկնալու տարիքը չունէի, եթե չըլլար հերոսական օրերը անոր վերնագրին, որ միանգամայն յանկերգ մըն էր. «Զա՛րկ, Կովկա՛ս...» [2]:

1907թ. Ռուբեն Զարդարյանը Վիեննայում մասնակցում է ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովին, «Ռազմիկ»-ի խմբագրապետությունը վարում է մինչև 1908-ը՝ Օսմանյան Թուրքիայի նոր Սահմանադրության հռչակումը: Այդ, այսպես կոչված, հեղաշրջումը հույսի նշույլներ է արթնացնում տարագիր հայերի սրտերում: Ոգևորությունը համակում է նաև պանդուխտ մտավորականներին: Նրանցից շատերը, այդ թվում և Զարդարյանը, վերադառնում են Կ. Պոլիս՝ կարծելով, թե երիտասարդ բարենորոգիչները կբերեն ազգերի իրավահավասարություն և ազատություն: Ի դեպ, Զարդարյանն այն քչերից էր, ով մինչև վերջ չէր հավատում թուրք գործիչների անկեղծությանը: Այնուամենայնիվ, նա իր պարտքն է համարում հայրենիք վերադառնալ և խանդավառության օրերին լինել ժողովրդի հետ: Տարագիր մտավորականը օգոստոսի 1-ին կրկին Կ. Պոլսում էր:

Հարաբերականորեն կարճատև խաղաղության, «ազատութեան օրերուն» (1908-1913) Պոլիս էին հավաքվել արևմտահայ գրեթե բոլոր արվեստագետները, սկիզբ էր առել հոգևոր վերածննդի շրջան, բացվել էին փակ լեզուները, ազատագրվել էր շղթայված միտքը, մի առանձնակի ոգևորություն էր տիրում երիտասարդության շրջանում: Գրական ասուլիսներին, երեկոներին հավաքվում էին հարյուրավոր հայեր, կենսական և հոգեկան մեծ գրգիռներ բերող արվեստը դարձել էր ընդհանուրի հետաքրքրության առարկան: Դ. Վարուժանն ու Սիամանթոն պոլսահայ երիտասարդության կուռքերն էին: Այդ տարիներին այստեղ էր նաև Կոմիտասը: Հայ երգը անօրինակ հետաքրքրություն էր ծնել քաղաքի լայն շրջանակներում: Շուտով Պոլիս է գալիս նաև Ավ. Իսահակյանը: Ժամանում էին հայկական թատերախմբեր՝ ազգային նոր խաղացանկով: Սիրանույշը և

մյուս արվեստագետները ոգևորության կրակ էին վառել: Երգն ու երաժշտությունը, բանաստեղծությունն ու թատրոնը ազգային բարձր զգացումների խանդավառություն էին ստեղծել Պոլսի հայության շրջանում:

Մի կարճ ժամանակ՝ 1908-ի նոյեմբերի 1-ից մինչև 1909-ի ապրիլի 2-ը, Զարդարյանն աշխատակցում է Միսաք Գոչունյանի (Քասիմ) խմբագրությամբ լույս տեսնող «Ժամանակ» թերթին՝ գրելով 33 հոդված: Սրան զուգահեռ՝ 1908-ի դեկտեմբերի 16-ից դառնում է նույն տեղի «Ազդակ» գրական, հասարակական, քաղաքական շաբաթաթերթի (խմբագրակազմը՝ Գ. Բարսեղյան, Զ. Եսայան, Վ. Թաթուլ, Շ. Միսաքյան) «համակրողներից» մեկը՝ հանդես գալով մեկ–երկու շահեկան հոդվածով:

1909թ. հունիսի 10-ին լույս է տեսնում «Ազատամարտ» օրաթերթի առաջին համարը, և խմբագրի պաշտոնը ստանձնում է Ռ. Զարդարյանը: Նրա համար սկսվում է աշխատատար, բուռն, բայց, միևնույն ժամանակ, հույզերով ու տագնապներով լի գործունեության մի նոր շրջափուլ: 1909-1915թթ. նա զբաղվում է հրապարակախոսական, մանկավարժական, թարգմանչական, հրատարակչական, կուսակցական աշխատանքներով: Վերադարձի առաջին տարիներին ընտրվում է Ազգային երեսփոխանական ժողովի ու Հայոց հրատարակչական ընկերության խմբագրական մարմնի անդամ:

«Ազատամարտը» կարճ ժամանակ անց դառնում է արևմտահայության ամենաընթերցվող լրագրերից մեկը: «Ազատամարտի» բարձր ժողովրդականությունը, կարծում ենք, առաջին հերթին պայմանավորված էր Ռ. Զարդարյան մարդու և խմբագրի գործոնով: 1909թ. մինչև 1915թ. ապրիլը «Ազատամարտն» արձագանքում էր Արևմտյան Հայաստանի ընկերային, տնտեսական ու քաղաքական, գրական-մշակութային կյանքին, վեր էր հանում հատկապես գավառների խնդիրները, փորձում ամեն գնով պաշտպանել արևմտահայերի ոտնահարվող իրավունքները: Թեև իր ստորագրությամբ Զարդարյանը քիչ հոդվածներ է լույս ընծայել, սակայն գրել է համարձակ ու խարազանող անստորագիր խմբագրականներ: Այդ հոդվածներն աչքաթող չէին արվում երիտթուրքական իշխանավորների կողմից. 1909թ. մի հրապարակման համար («Պարսկաստանի Փարլամենթը և Հայ պատգամավորներ») [4] իշխանությունները դատ են բաց անում «Ազատամարտի» դեմ: Զարդարյանը պատվով է դուրս գալիս և այս փորձությունից, շարունակում համառ ու սկզբունքային պայքարն ընդդեմ անարդարության, ոտնձգության, հանուն հանրային, առանձնապես հայության իրավունքների ու շահերի պաշտպանության: Ճնշումների ազդեցության ներքո 1912թ. «Ազատամարտը» տպագրվում է ընդհատումներով, փոփոխվող անուններով՝ «Առաջամարտ», «Բութանիա», «Ագդակ» և այլն:

1910թ. հուլիսի 10-ին Զարդարյանը հիմնում է «Ազատամարտ» գրական, գեղարվեստական և գիտական շաբաթաթերթ-հավելվածը: Ժամանակի հոգևոր-մշակութային դաշտում «Ազատամարտը» ստանձնում է ուրույն դերակատարություն՝ գործելու լայն ասպարեզ տրամադրելով արևմտահայ տաղանդավոր մտածողներին: Այն լույս է տեսնում մինչև 73-րդ համարը (վերջին թիվը՝ 1911թ., նոյեմբեր 28/11 դեկտեմբեր)՝ Ռ. Զարդարյանի, Ռ. Դարբինյանի և Շ. Միսաքյանի փոխնիփոխ խմբագրապետությամբ: 1911-ի դեկտեմբերից որոշվում է պարբերականը լույս աշխարհ բերել «Բամբիռ» անունով, բայց ձեռնարկը մի քանի օրով հետաձգվում է, որից հետո նոր շաբաթաթերթը՝ «Բագին» գլխագրով, լույս է տեսնում կարճ ժամանակով՝ առանց Զարդարյանի մասնակցության:

1913թ. Կ. Պոլսում Եսայան սանուց միության նախաձեռնությամբ կազմակերպվում են գրական ասուլիսներ, որտեղ հանդես են գալիս Երուխանը, Զ. Եսայանը, Հ. Սիրունին և Կոմիտաս վարդապետը: Ասուլիսների եռանդուն մասնակիցն էր նաև Զարդարյանը: Եսայան սանուց միության առաջին գրական ասուլիսը կայացել է 1913-ի մարտի 3-ին, իսկ վերջինը՝ վեցերորդը, հունիսի 2-ին: Այդքանով ավարտվել է ասուլիսների առաջին շրջանը:

Գրական հավաքույթներում հաջորդաբար քննարկվել, վերլուծվել են Շանթի «Հին աստվածներ» դրաման, Գ. Զոհրապի նովելների երեք ժողովածուները, Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» գիրքը, Զարդարյանի «Ցայգալույս» ժողովածուն, ՀովՀ. Սեթյանի բանաստեղծությունները և Սիամանթոյի «Ամրոցական գործը»: Ասուլիսների կազմակերպիչների ելույթներից պարզորոշ նկատվում է, որ նախապես ճշտված է եղել այն հեղինակների ցանկը, որոնց գործերը հաջորդաբար պետք է քննարկվեին (Լ. Շանթ, Գր. Զոհրապ, Դ. Վարուժան, Ռ. Զարդարյան, Սիամանթո, Ս. Պարթևյան, Զ. Եսայան): Փաստորեն, եթե նախօրոք ծրագրված հեղինակներից վեցին պիտի ասուլիսներ նվիրվեին, ապա միջոցառումների առաջին շրջանը պետք է ավարտվեր Սուրեն Պարթևյանով: Գրական հավաքույթների կազմակերպիչները ընտրել են մի կողմից՝ ճանաչված գրական մեծություններ և մյուս կողմից՝ նոր, խոստումնալից ուժեր, որոնցից և ոչ մեկին չի պատկանում Սեթյանը: Վերջինիս նվիրված ասուլիսը, ինչպես նկատում է բանախոսներից մեկը, եղել է կրթական ու գրական համեստ մշակի վաստակը գնահատելու միջոցառում՝ նվիրված նրա 40-ամյա գործունեությանը:

Ասուլիսների երկրորդ շրջանը, սակայն, չիրագործվեց. 1913-ի աշնանից երիտթուրքերի բացահայտ հակահայ դիրքորոշման ու թշնամանքի պատճառով զանգվածային միջոցառումները արդեն անկարելի էին դարձել:

1910-ականների սկզբներին, ներառյալ 1914թ., Զարդարյանը գրական նոր զարգացումների բովում էր. մասնակցում էր իրականության և իդեալի հակադրությանը նպատակամիտված, ուժի, գեղեցկության և այլ արժեքների պանծացմանը նվիրված «հեթանոսական» գրական շարժմանը՝ «Մեհյան» հանդեսում

տպագրելով «Հայրենական սազը» (համար 3), «Նավասարդ» տարեգրքում՝ «Ով որ սուլթան մը ունի իր հոգիին մեջ» ստեղծագործությունները:

1914թ., երբ Զարդարյանը Կարինում մասնակցում էր ՀՅԴ 8-րդ Ընդհանուր ժողովին, սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Դաշնակցությունն անավարտ է թողնում ժողովը, և Զարդարյանը տագնապով վերադառնում է Պոլիս: Երիտթուրքական կառավարությունը հարմար պահն օգտագործում է՝ իրագործելու վաղօրոք մշակված ծրագիրը՝ մեկընդմիշտ ազատվել հայերից: 1915թ. ապրիլին շատերի հետ ձերբակալվում է նաև Ռ. Զարդարյանը:

«Օրն էր Շաբաթ, լոյս ի Կիւրակի, - հետագայում գրում է Հր. Զարդարյանը «Անվերադարձ մեկնումի գիշերը» հուշագրականում: - Ես ու եղբայրներս տունը, առանձին ընթրիքէն վերջ անկողին էինք արդեն: Ծնողքս այցելութեան գացած էին Պրոֆ. Աստուածատուր Խաչատուրեանենց: Բոլորովին անսպասելի զանգահարում մը, ընդոստ ոտքի, մենք մեզ, ես եւ Ռաֆայէլը, ոստիկաններու խումբին մը առջեւ գտանք: Վճռական շրջահայեաց, արիւնկզակ ներս մտան: Նոյնքան անմիջական վճիռ մը կայացաւ մէջս, վայրկենական, մեծ առաքելութեան մը լոյսով հրդեհուեցաւ. հարկ էր, որ ժամ առաջ, հայրս տուն չեկած, տեղեկացնէի իրեն եղելութիւնը: Փանկալթրի հրապարակը հասնելուս՝ մնացի ապշած: Տեսայ, որ վերէն, ոստիկաններով շրջապատուած, Կոմիտասը, իր վեղարովը, կը յառաջանայ: Աւելի վար, նոյն պայմաններուն մէջ, նշմարեցի Վարուժանին վտիտ մարմինը եւ ճերմակ դէմքը: Երկու այլ խումբ աւելի հեռուն կը յառաջանային: Խաչատուրեանենց մօտ բազմութիւն կար: Կը յիշեմ՝ Ակնունին, Խաժակը, Ս. Մինասեանը: Քանի մը երկվայրկեան անշարժացան քար լռութեան մէջ:

«Քալէ՛, Վերո՛ն», հայրս վերջապէս ըսաւ մօրս: Սթափեցան: Խուժող խորհրդածութեանց բարձրաձայն տեղատարափ: Անլուր, անիշխան խռովք մը պատեց զիս...» [3]: Ավա՛ղ, Ռուբեն Զարգարյանը ընկերների հետ չխուսափեց եղերական իր ճակատագրից, թեև, հավանաբար, ժամանակի՛ն գուցե, կարող էր անսալ Անդրանիկի՝ կնոջը տված խորհրդին, ինչի մասին փաստում է արձակագիր Անդրանիկ Ծառուկյանը պատմավավերագրական «Սերը եղեռնի մեջ» վեպում. «Ըսէ՛ Ռուբէնին, համոզէ, որ թողու Պոլիսը. կա՛մ նորէն Ֆելիպէ փոխադրուիք, կա՛մ Եգիպտոս գաք, ես լաւ հոտ չեմ առներ այս քաղաքէն» [4]:

Տարիներ հետո արևմտահայ քաղաքական գործիչ Բյուզանդ Պոզաճյանից, որ ամիսներ շարունակ Ռ. Զարդարյանի հետ գտնվել է միևնույն բանտախցում, Հր. Զարդարյանը կարողանում է որոշ տեղեկություններ քաղել հոր վերջին օրերի մասին: Ճշտում է, որ նա օգոստոսի վերջին մի խումբ մտավորականների հետ դուրս է բերվում Այաշի բանտից և գազանաբար հոշոտվում Գապլը Պելի լեռան ստորոտում...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Հր. Զարդարյան,** Մեր կյանքը, Երևան,, 1982, էջ 4 (տե՛ս՝ Ալ. Թոփչյանի ներածական խոսքը):
2. **«Լուսաղբիւր»,** Փարիզ, 1953, Ա. տարի, թիւ 8, էջ 304:
3. **«Նայիրի»,** Պէյրութ, Ապրիլ 26:
4. **Անդրանիկ Ծառուկեան,** Սերը Եղեռնին մէջ, Պէյրութ, 1987, էջ 86:

А.П. КАРАГУЛЯН

РУБЕН ЗАРДАРЯН И ЗАПАДНОАРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ

Представлена литературная деятельность Р. Зардаряна, показана его роль в западноармянской литературной жизни.

Ключевые слова: писатель, общественная деятельность, культурный центр, периодическое издание.

H.P. KARAGULYAN

RUBEN ZARDARYAN AND WESTERN ARMENIAN LITERARY LIFE

Ruben Zardaryan's literary work and its role in the Western Armenian literary life is presented.

Keywords: writer, social activities, cultural center, article periodical.

УДК 821.161.1(479.25)

Б.Ж. ГАЛСТЯН, А.П. КАРАГУЛЯН

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ (ВАН) И НАГОРНЫЙ КАРАБАХ (АРЦАХ) В МИРОВОЗЗРЕНИИ С.М. ГОРОДЕЦКОГО

Известный русский поэт, переводчик, общественный деятель С.М. Городецкий написал множество статей, стихотворений и ряд очерков, посвященных Западной Армении и Арцаху. В период 1916-1921 гг. С.М. Городецкий жил и работал в Закавказье, принимал участие в культурно-просветительской жизни страны, общался с армянской интеллигенцией, в частности с Ов. Туманяном.

В своих выступлениях С. Городецкий защищал интересы армянского народа, разоблачал колониальную политику европейских держав в отношении Армении.

Ключевые слова: Западная Армения, Геноцид, познание жизни**,** национальное достоинство, армянский народ, дружба, братство, Нагорный Карабах, мировоззрение.

Сергей Городецкий справедливо считал себя продолжателем идей Валерия Брюсова. Тесное общение с армянским народом все более сближает